

# ՏՆԿԵԼՈՎ ԱՐՄԱՏՆԵՐ

## Նպատակ

Ծրագիրը նպատակ ունի խթանել Երեխաների աջակցության կենտրոնի շարունակական զարգացումը և դրական փոփոխություններ բերել երեխաների վաղ դաստիարակման շրջանում:

## Գործողություններ

Վանաձորի երեխաների աջակցության կենտրոնում տեղադրել ջերմոց՝ երեխաներին սովորեցնելով աշխատել հողի հետ, սերտել սեփական բույսերը աճեցնելու նրբությունները:

## Ծրագրի նկարագրությունը

Վանաձորի երեխաների աջակցության կենտրոնը այնտեղ ապրող 6-18 տարեկան ավելի քան 100 երեխաների տրամադրում է տաք սնունդ, կրթական և հոգեբանական աջակցություն: Այնտեղ ապրող երեխաներից շատերը հաճախում են կենտրոն ծայրահեղ աղքատ և ոչ բարվոք պայմաններում ապրող ընտանիքներից, սակայն կենտրոնը աջակցում է նրանց թերապիայով, խորհրդատվությամբ, կրթական օգնությամբ: Մեկ բառով՝այն տուն է՝ տնից հեռու: Կենտրոնում երեխաները կարող են զբաղվել ցանկացած գործով: Կրթական տարվա սկզբում երեխաները նաև ստանում են դպրոցական պարագաներ, պայուսակներ, ինչպես նաև հագուստ: Կենտրոնը միակն է ամբողջ Լոռի մարզում, և տարբեր հեռու, թե մոտ գյուղերից երեխաները գալիս են այստեղ:

«Այո»-ն ցանկանում է նոր ակտիվություն բերել կենտրոն՝ տրամադրելով ջերմոց: Մենք կհավաքենք 7025 ԱՄՆ դոլար, որպեսզի տեղադրենք 135 քմ ջերմոց, որը կլինի կենտրոնի մաս կազմող մեկ այլ ակտիվություն առաջարկող միջոց: Երեխաները կմասնակցեն այգեգործության դասերին, որտեղ դաստիարակները կսովորեցնեն, թե ինչպես զարգացնել այնպիսի նրբություններ, ինչպիսիք են ուշադրությունը բույսերի նկատմամբ, որպեսզի կարողանան շարունակական կերպով զարգացնել Լոռվա մարզը: Երեխաների խնամակալության տակ գտնվող ջերմոցում կաճեցվի բանջարեղեն՝ դառնալով կենտրոնի համար ևս մեկ ռեսուրս: Այսպիսով ամենակարիքավոր երեխաները ակտիվ դերակատարություն կունենան իրենց քաղաքի կյանքում, ինչով կաջակցեն իրենց կենտրոնին և համայնքին:

Եկե՛ք ասենք «Այո» առողջ սերնդի դաստիարակությանը:

## Բյուջե

| ԻՆՉ | ՔԱՆԱԿ | Մ. ԱՐԺԵՔ ՀՀ ԴՐԱՄ | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՀ ԴՐԱՄ | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՄՆ ԴՈԼԱՐ |
|---|---|---|---|---|
| Հողի նախապատրաստում և հավելյալ աշխատուժ (0,5 խ. մ. ավազ, խիճ, 5 պարկ ցեմենտ և հավելյալ աշխատուժ) | 1 | 200,000 | 200,000 | $421 |
| ջերմոց (135ք. մ., CARD) | 1 | 1,911,000 | 1,911,000 | $4,023 |
| Ջրացողիչ համակարգ | 1 | 150,000 | 150,000 | $316 |
| Սածիլ/բույս | 350 | 130 | 45,000 | $96 |
| Սածիլի տեղափոխում | 1 | 40,000 | 40,000 | $84 |
| Թունաքիմիկատներ | 1 | 20,000 | 20,000 | $42 |
| Հողի հետազոտում | 1 | 25,000 | 25,000 | $53 |
| Գյուղատնտես | 5 | 43,000 | 215,000 | $453 |
| Ջեռուցում | 1 | 350,000 | 350,000 | $737 |
| Հող ամեն ք. մ. համար | 30 | 11,000 | 330,000 | $695 |
| Տրանսպորտային ծախսեր | 5 | 10,000 | 50,000 | $105 |

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ **$7,024**